

ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Երբ հայտնի գիտնական Պյուրագորասին հարցրեցին, թե քանի աշակերտ ունի, նա պատասխանեց. «Աշակերտներիս կեսն ուսումնասիրում է մաթեմատիկա, քառորդ մասը բնությունը, յոթերորդ մասը մտածում է ինչ անել, իսկ մնացած երեքը կուլյսեր են»:

2012թ.-ի նոյեմբերի 10-11-ը Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում կազմակերպվել էր հերթական առարկայական օլիմպիադան դպրոցականների համար: Օլիմպիադային մասնակցում էին աշակերտներ հանրապետության տարբեր կրթօջախներից:

Ինֆորմատիկա առարկայի հանձնաժողովի նախագահը «Քանի՞ աշակերտ է մասնակցում ինֆորմատիկա առարկայից օլիմպիադային» հարցին պատասխանեց Պյուրագորասյան ոճով. «Մասնակիցների K-րդ մասը սկսել է լուծել առաջին խնդիրը, M-րդ մասը եկրորդը, N-րդ մասը երրորդը, իսկ D մասնակից փորձում են լուծել հետեւյալ խնդիրը «Ինչի՞ց սկսել»:

Ձեր խնդիրն է պարզել օլիմպիադային մասնակցող աշակերտների քանակը կամ արտածել no solution, եթե հանձնաժողովի նախագահը սխալվել է:

Մուտքային տվյալներ

Մուտքի միակ տողում տրված են K, N, M, D ($1 \leq K, N, M, D \leq 100$) բնական թվերը:

Ելքային տվյալներ

Միակ տողում արտածել օլիմպիադայի մասնակիցների քանակը կամ արտածել no solution, եթե հանձնաժողովի նախագահը սխալվել է:

Օրինակներ`

N	stdin	stdout
1	2 4 7 3	28
2	2 2 2 3	no solution